

օտար)։ Միւս տէրի ծննդանում 448 ուսանող կայ (8 օտար)։ Գերմանական 21 համալսարաններում այս ամսու ուսանում են 29,802 հոգի, որոնցից բուն գերմանացի են 27,615 հոգի, իսկ 2,189 հոգի օտար ներգաղթի։ Անցած ժամրային կիսամեկի համեմատութեամբ բոլոր ուսանողները թուին աւելացել է 685 ուսանող։

Տգրուէի պատճառով վնասը. — Պրոֆեսոր Պաշինտտի արդէն վեց տարի սրանից առաջ բժշկութեան մէջ գործածուող տղուկները քննելու ժամանակ 55 հատից երկուսի մէջ գտաւ Նիկոլաէրի եւ Բօզէնքաիի յայտնի քաղցիւ եւ առհասարակ եկաւ այն համոզման, որ տղուկների միջոցաւ Նեշտ կերպով կարելի է վարակիչ հիւանդութիւններ պատուաստել։ Եւ այդ հայեացքը եւ հետազոտութիւնների հետեւեցը հեղինակը արծարծեց մի ընդարձակ յօդուածում 1890 թուին։ Այժմ Պաշինտտին նորերումս իրան պատահած մի դէպքի մասին հաղորդում է, թէ ինչպէս մի հիւանդ տղուկի կայնելուց յետոյ վարակուեց մահացու լըգողութեամբ եւ արեան վարակմամբ։ 18 ժամ մահից յետոյ դիակը ննթարկուեց քննութեան. սրտի եւ միւս գործարանների արեան մէջ գտնուեցին մահաբեր լըգողութեան քաղցիւները, այդ գիտը հաստատուեց պատուաստելով անասուններին եւ հիւանդանոցները նրանց մի եւ նոյն հիւանդութիւնով։



ԱԶԳԱՅԻՆ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ. ՄԱՅՐ ԱԹՈՒՆ.

ՄԱՐԱԼԱՅՍ ՄԻՒՌՈՒՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԻՒՄԻ ԵՆՏԸԶԳՈՒՄԸ.

Հաստ յարգելի պատճառներ ստիպում են Ազգիս Վեհափառ Հայրապետին յետաձգել Ս. Միւսուրի օրհնութիւնը որ նշանակուած էր կատարելու առաջիկայ տեղեկութեան 29-ին։

Մի այսպիսի անսպասելի եւ անսովոր յետաձգման որոշումն անշուշտ իւր ծանրակշիւ պատճառներն ունի. ուստի եւ յուսով ենք, որ մեր ազգայինք կյարգեն իւրեանց Սիրեցեալ Հայրիկի այս նոր կարգադրութեան յայտարարութիւնը եւ աներկբայելի յուսով կպասեն մօտ ապագայում արժանանալու այդ շնորհաբաշխութեան հանդիսին, որ պիտի կատարուի Տեառն յաջողութեամբ աւելի յարմար ժամանակ երբ նաեւ Մայր Տաճարի ներքին նորոգութիւնը աւարտած եւ բազմաթիւ բարեպաշտ ուխտաւորաց ընդունելութեան համար ձեռնարկած պատրաստութիւնները վերջացած կլինին։

Վեհափառ Հայրապետը Օգոստոսի 26-ին հաճեցաւ իջնել Բիւրական ամառանոցից Ս. Էջմիածին, ուր բազմաթիւ եկեղեցական վարչական եւ դպրոցական խնդիրներ նորին Օծութիւնն անձամբ սկսաւ կարգադրել։

Ներքին գործոց նախարարութիւնից յայտնուած է նորին Վեհափառութեան, որ Պետերբուրգից Մայր—Աթոռս պիտի ժամանէ օտար դաւանութեանց վարչութեան տեսուչ պ. Մասալովն իրեն օգնական ունենալով Պետերբուրգսկի վեգոմոստիս խմբագիր իշխան Ախտոմսկուն, որոնք պիտի դիտեն մեր դպրոցական հաստատութիւններից մի բանիսը։

Գ. ՃԵՄԱՐԱՆ.

Այս տարի Գ. Ճեմարան մտնել ցանկացող աշակերտաց թիւը շատ մեծ էր, չը նայելով որ տեղի անձկութիւնն եւ նախահաշուի որոշումները թոյլ չէին տալիս շատ աշակերտ ընդունելու, բայց Վեհափառ Հայրիկն Եւր յայտնի գթութեամբ հրամայեց չը մերժել պատրաստի եւ ուսումնատենչ պատանիներին, Ընորհիւ Վեհափառ կաթուղիկոսի այս հրամանի երրորդ դասարանին կից այլեւս զուգընթաց դասարաններ պիտի բացուին, որի համար ընդունուած են արդէն իսկ 60 աշակերտ, սակայն նորեկ աշակերտների հոսանքը դեռ եւս չէ դադարել։

Դպրանոցներից չըջանաւարտ սաներ եւս ինդրամատոյց են եղել առաջին լսարան մտնելու, որոնցից առ այժմ ընդունուած են միայն 4 հոգի։

Նորին Օծութիւնը մտադիր է Ճեմարանի լսարանի աշակերտները տեղափոխել տալ ս. Գայեանէի նոր շէնքերի եւ այսու տեղ բանալ նորեկ աշակերտաց համար։

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՆՑ.

Մայր Աթոռոյս տպարանն այսուհետեւ պիտի կատարէ ամենայն տեսակ տպագրական յանձնարարութիւններ, որովհետեւ տպագրութիւնք բոլոր գրքերը պէտք է կոմպոսեան գրաքննութեան հաւանութիւն ստացած լինեն, Տպագրական յանձնարարութիւններ ունեցողներին առաջարկում ենք դիմել տպարանական մասնաժողովին։

Տպարանն ունի այժմ յատուկ կազմատուն եւ

ընդունում է կազմարարական ամեն տեսակի յանձնարարութիւններ:

— Լոյս տեսաւ Պատմութիւն ԱՌԱՔԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԱՒԻԹԵՑԻՈՅ, առ ի գիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի Ռ՝ՕՒԼ թուականէն Հայոց մինչ ի Ռ՝ՃԺԱ թ. երրորդ տպագրութիւն. 8³ եր. ԺԵ+711. գինն է 2 ռուբլի:

Լոյս հրատարակութիւնն ունի յառաջաբան, յատուկ անձանց ցանկ և տարրեր ընթերցանութիւններ: Մեր ազգային պատմութեան զրազուողներին համար այս հրատարակութիւնս ցանկալի օժանդակ միջոց պիտի լինի:



Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Ս. Պ. ԱՏՐԻԲՐԷԻ ԶՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐ

ԵՒ

Կ. ՊՈԼՍԻ ՎԵՐՋԻՆ ԿՈՏՈՐԱԾԸ:

Տաճկահայոց վիճակն հետզհետէ փոխանակ բարելաւելու վատթարանում է. տաճիկ կառավարութիւնը վաղուց հետամուտ էր հեռացնելու պատրիարքութիւնից Տ. Մատթէոս արքեպիսկոպոսին, Բռնի և սպառնական ոչ մի հնար չկարողացաւ սակայն ազդել արի պատրիարքի վրայ և նա կատարեց իւր պաշտօնը մինչև այն ժամանակ, երբ տեսաւ, որ այլ ևս իւր պաշտօնավարութեամբ կարող չէ օգնել իւր հօտին, ուստի մի զեկուցագրով դիմեց Կ. Պոլսի ղեկավարութիւններին և խորհուրդ խնդրեց ազգի գործերը բարելաւելու համար, երբ այդ խորհուրդն էլ զլացան նրան տալ, նա այն ժամանակ հրաժարական տուաւ, որ և ուրախութեամբ ընդունուեցաւ:

Տ. Մատթէոս արքեպիսկոպոսն այլ ևս պատրիարք չէ և ապրում է քաշուած Իսկիւտարում: Տաճիկ կառավարութիւնն թէպէտ տրամադրութիւն ունէր արքեպիսկոպոսին նրան Տրիպոլիս, բայց ղեկավարների խորհրդով յետ կեցաւ իւր մտադրութիւնից:

Տէր Մատթէոս սրբազանի փոխանակ պատրիարք ընտրելու թոյլ չտուաւ Բ. Գուռը, նա մերացրեց սահմանադրութիւնն և մի իրադէով հրամայեց մի քանի իրեն հաւատարիմ հայերի, որ տեղապահ ընտրեն, Այդ հայերը, որոնց պարագլուխն էին պ. պ. Նուրեան, Արրահամ փաշայ, Նորատուկեան, բացառութեամբ մի քանի հոգու իրենց իրաւունք համարեցին խառն ժողով կազմել և տեղապահ ընտրել Բարդուղիմէոս եպիս-

կոպոսին, որ անմիջապէս հաստատուեցաւ և զնաց Առլթանից շնորհակալութիւն անելու: Այդ շնորհակալութեան ճառի մէջ սրբազանն յայտնել է, որ ինքը սուլթանի ստորուկն է, իւր համար թէ այս և թէ միւս կեանքում միակ երջանկութիւնն սուլթանին հաւատարիմ ծառայելն է և որ Հայոց միակ ապաստանարանն երկրիս վրայ սուլթանի գահն է:

Այսպիսի հաւատարմութեան համար թէ սուլթանն տիր տեղապահ և թէ Նուրեան ընկերութիւնն շքանշաններ են ստացել:

Այս կեանքում այսպէս առատ վարձատրուելով յոյս ունինք, որ յիշեալ անձինք անշուշտ միւս կեանքումն ևս իրենց արժանի վարձը կստանան:

Օգոստոսի 14—18 օրերը Կ. Պոլսի հայոց համար սև օրեր եղան. յեղափոխական մի խումբ վճռելով տէրութիւնների ուշադրութիւնը հրաւիրել հայերի թշուառ զրութեան վրայ, մի յանգուզն գործ է ձեռնարկում. յարձակմամբ առնում է Օսմանեան կայսերական զրամատունն և մի քանի տեղ ուղւմներ է պայթեցնում սարսափ տարածելու համար:

Այս շարժումից օգուտ քաղելով մահմետական պատրաստի խուժանն, երեք օր և երեք գիշեր կոտորում է խեղճ և անմեղ հայերին, զոհերի թիւն հաշուում են 10,000, որոնցից 3,000 հոգի միայն Խաս-քէջի մէջ են կոտորուել, Դրամատուն մտած յեղափոխականները պայմանաւորուում են և ապահովապէս փոխադրուում Եւրոպայ, իսկ խեղճ հայ ժողովուրդը լողում է արեան մէջ, Վեց պետութեանց ղեկավարները ականատես լինելով այս անցքերին դիմումներ են արել Բ. Դրան, որ խոստացել է կոտորածը դադարեցնել, Կ Պոլսում ղեկ շարունակուում է արհաւիրքը, կառավարութիւնը նաւերով տեղափոխում է հայերին դէպի Փոքր Ասիա, որովհետև բանտերում այլ ևս տեղ չկայ:

ՎԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ¹

(Նամակ ակամատեսի)

Մինչդեռ Տաճկաստանի զրեթէ բոլոր հայոց գաւառները ենթարկուած էին տաճկական խզգուծեանց, համեմատաբար աւելի լաւ վիճակի մէջ էր Վանի վիլայէտը, Եւ ո՞վ կարող էր մտածել, թէ ամենասոսկալի հարուածը պատրաստուած էր հենց այս բազմամարդ հայոց կեդրոնի համար:

Վաղուց էր որ տաճիկները մտադրուել էին

1) НОВОСТИ № 212. (նովոստի)

Վանի քրիստոնեայ ընկերներին ընդհանրապես կոտորել և նոցա մոլեռանդ զրդիոր աճում էր հետզհետէ, քանի նորանոր տեղեկութիւններ էին ստացուում Հայաստանի զանազան տեղերում կոտորուած խժոճութեանց մասին:

Թունուարից այստեղ է գտնուում իրր րարե-նորոգումներ մտցնելու համար սեղարկուած սուլ-թանի կոմիսար Սայից—Էզգին փաշան: Այս խաղաղարարը անում էր ամեն ինչ զրգուելու համար, առանց այն էլ մոլեռանդութեամբ կուրացած տաճիկներին: Անցեալ ամսին նա մի ինչ որ գործի հա-մար յետ կոչուեցաւ Վ. Պոլիս և վերադարձից յե-տոյ այնքան երես էր առել, որ իւր տունը ընդու-նեց յայտնի աւաղակապետ Շաքիրին և երկու օր շարունակ հիւրասիրեց այդ շարագործին: օր արգէն պատապարտուած է դատական վճռով և անյայտ պատճառով անպատիժ է մնում:

Սայից—Էզգին—փաշան սկսեց միջմտել վի-լայետի բոլոր քաղաքական և զինուորական գործե-րին և իւր ձեռքը առաւ բոլոր իշխանութիւնը, գրեթէ բոլորովին հեռացնելով գործից իւր մատու-թիւններով Վանի վալի նազար—փաշային: իրրե մի թոյլ մարդու օր իւր վարմունքով խախտուելիս է եղել իրր յեղափոխականներին:

Այս յեղափոխականներին գտնելու պատրու-կով նա սկսեց Հայոց տները խուզարկել (300—600) զինուորներով: րայց այդ խուզարկութիւններից բան դուրս չեկաւ:

Մի քանի հայերի իւրեանց տաճիկ բարեկամ-ները նախազգուշացրել էին լծէ մայիսի 31-ին նը-շանկուելու և կոտորածի: օր սկսուելու է րազարից: Բայց տաճիկաց Վաւրան Բայրամի տնի պատճառով րազարը այդ և յաջորդ օրերը գոց էր և կոտորածը ըստ երեւոյթին յետաձգուեցաւ:

Թունիսի 31 զիշերը քաղաքից դուրս մօտ կէս ժամուայ հեռաւորութեան վերայ պահապան զի-նուորները հանդիպում են մի քանի ձիաւորներին: Հրացանաձգութիւն են սկսում և տաճիկ սպայն և մի զինուոր վերաւորուում են: Մի էին այդ ձիա-ւորները: Ամանք կարծում են: լծէ հայ յեղափո-խականներ են եղել, կամ ինչպէս տաճիկները նոցա անուանում են ծան—Ֆիդա (այնպիսի մարդիկ որոնք իւրեանց զոհ են ընելու իսէր պաշտպանեալ գործի): օմանք էլ կարծում են: լծէ գոթա քուրդ մարսանեղներ էին և այս աւելի հաւանական է:

Սորանից յետոյ կէսօրից սկսուեցաւ կոտորա-ծը: Վնկապետ Հաչիմ—էֆենդին, օր մասնակցել է Սասունի և Սիւրդի կոտորածներին և հռչակուել է սուլալի շարագործութիւններով, իսկ այս զէպ-քում նշանակուած լինելով պաշտպանելու (—) Այգեւստանը (հայոց ամենարապմամարդ թաղը), մի խումբ զինուորների հետ Արարուց հրապարակով ան-ցաւ զէպի Պլոր—Գար թաղը: Մօտենալով Հայոց թաղները և հրամայեց զինուորներին արձակել հրա-ցանները: Այս նշան էր կոտորածի: օր տաճիկները վաղուց սպասում էին:

Տաճիկաց ամբոխը խելոյն յարձակուեցաւ հայոց անպաշտպան տների վերայ և սկսեց սպանել մարդ-կանց, բարդել, քանդել: այրել ամեն ինչ, օր ձեռ-նէրն էր ընկնում:

Մի քանի ժամուայ մէջ Իփր-գար, Արարք, Հայկայ—վանք, Թորոմանի—թաղ, Փոս—թաղ, Զէլէ-

րիւր, Ս. Ծակորայ Փողան և Նորաշէն թաղերը ա-ւերակ դարձան: մօտ 800 մարդ առանց խորութեան սեռի և հասակի խոտորեցան: Եւ քանի՜ քանի կանայք և օրորդներ գերուեցան և քանիսը նոցա-նից առեանգեցան: Հատերը ապաստան էին դըռ-նում կոտորածին չմասնակցող տաճիկների տների մէջ: րայց այսպիսի բաղդաւորներից քշերը զերծ մնացին ընդհանուր կոտորածից: հայեր մարդ, բո-լորը այր մարդիկ, որոնք ծածկուել էին Թեմուր—զարէ Վալիւ—րաշի ոստիկանապետի տանը: մի քա-նի օրից յետոյ սրոյ ծարակ եղան:

Հետեւեալ օրը (յունիսի 4-ին) գիշերային դա-գարից յետոյ անկարգութիւնները կրկնուեցան: Տաճիկ ամբոխը խուժեց բոլոր հայոց թաղերը, սա-կայն այս անգամ՝ նոքա հանդիպեցան հայերի կող-մից սաստիկ ընդդիմադրութեան: Վերջինները ամ-րանալով իւրեանց տների մէջ, կրակ բացին և չթոյլ տուին թշնամուն առաջ գալ: Նախընթաց օրուայ կոտորածից ազատուած երեխայք և կանայք հիւ-պատոնների հովանաւորութեամբ պատասպարուեցան անվնաս մնացած թաղերում: Այդ օրը միայն մի մարդ սպանուեցաւ: այն է՝ Վարազայ վանքի վանա-հայր Դանիէլ վարդապետը այն ժամանակ, երբ նա անցնում էր պահակներից մինի մօտով: երկու օր նորա զին փողոցի վերայ էր ընկած և շները կըր-ծում էին նորան: Հորեքշարթի (յունիսի 5-ին) տա-ճիկ ամբոխի հետ միանում են քրդերը և համի-դիէն: Բայց իւրեանց կեանքը զէն ի ձեռնին պաշտ-պանող հայերը դարձեալ յետ են մղում՝ նոցա: Տարօրինակ կերպարանք էր ստացել շարաքստիկ քաղաքը տանիքներից շատերը աշտաքակ էին դար-ձել: փողոցները կտրտած ծառերով լեցուել էին: որպէս զի անանցանելի լինին հեծնազօրքի համար: Թշնամին չկարողացաւ մտնել ազատուած թաղերից և ոչ մինի մէջ: Այդ օրը կոիւր տեւեց մինչև երե-կոյ: րայց մի կարճ ընդհատումից յետոյ նոյն խըս-տութեամբ կրկնուեցաւ զիշերը: Հայերը չէին տեղի տալիս: տաճիկները և քրդերը ժողովում էին կուռի դաշտից իւրայինների դիակները:

Հինգշարթի (յունիսի 6-ին) կոիւր շարու-նակվում է: Գալիս են Համիդիէի և քրդերի նոր խմբեր: Թուով 7-ից մինչև 10 հազար և միանում են տաճիկների հետ: Նսում են: օր միայն Համի-դիէի թիւը հասնում էր 15 հազարի: Զինուորնե-րը, որոնք մինչև այդ ժամանակ հատ հատ էին դործում, խառնուելով ամբոխի մէջ, հրաման են ստանում կրակ բանալ ապստամբների դէմ (կառա-վարութիւնը պատսամբ էր ծանաշում այն թշուառ հայերին, որոնք հոգեւարք դրութեան մէջ կուլում էին իւրեանց կեանքի և կանեց և երեխայոց պատ-ուի համար): Հայերը շարունակում են պաշտպան-ուել և շնորհիւ գորան սպանուածների թիւը քիչ է լինում:

Այդ օրը իրերի վիճակը միանգամայն նոր ուղղութիւն է ստանում:

Այստեղի անդլիական հիւպատոս Վիլիամը) նկատելով օր հայերի ընդդիմութիւնը կարող է գոր-ծը ձգձգել և թերեւս ոչ ցանկալի հետեւանքներ առաջ բերէ, գործի մէջ մտաւ և ոչ պաշտօնական կերպ վ այցելեց լծէ հայերի և լծէ տաճիկների կողմից բռնած տեղերից մի քանիսը:

Մէյնուս միսսիօնարի միջոցով Վիլիամը սկը-

սեց բանագնացութիւն պաշտպանուող հայերի հետ յայտնելով նոցա թէ ինքը բոլոր վեց պետութեանց ներկայացուցիչ է, Մի փոքր տատանուելուց յետոյ շարաթ օրը հայերը համաձայնեցան բանակցել, Միևնոյն ժամանակ կոխը շարունակվում էր, Թշնամին կրակում էր հայերին ամեն կողմից միաժամանակ, առանց յաջողութիւն ունենալու:

Աերջապէս կայացաւ Ալիլիամսի և Ռէշնուսի և հայոց երեք պարագլուխների մէջ ժամայիր եղած տեսակցութիւնը: Անգլիացւոց հիւպատոսը պահանջում է, որ այդ պարագլուխները ուրիշ տասը զինուած հայերի հետ անձնատուր լինին իւրեան, այն պայմանով, որ դոցա կուզարկեն իւրեանց ընտրած տեղը: Հայերը համաձայնում են, միայն իւրեանց կողմից էլ պահանջում են, որ բանակցեն իւրեանց հետ ոչ միայն անգլիական այլ բոլոր տեղական հիւպատոսները:

Նախընթաց օրը Ալիլիամսը հետագրով տեղեկացել էր, որ Վանում հաստատուել է Ֆրանսիական հիւպատոսութիւն և այդ պաշտօնը յանձնուած է տեղական կաթողիկ միսիօնար Դիւ—Ֆրանսին: Բայց Ալիլիամսը, չգիտեմ ինչու, իւրհետ առնում է միայն պարսից հիւպատոս Միրզա Ռիսսէնտիանին և Ռուսաց հիւպատոսարանի թարգման պ. Զիլինկարեանին (Ռուսաց հիւպատոս Մայիսկին կրկու շարաթով Թիֆլիզ է զնացած լինում), ի՞նչ առաջին և թէ երկրորդ տեսակցութեան ժամանակ ներկայ է լինում հայոց թեմական Առաջնորդը, երկրորդ տեսակցութեան միջոցին առաջուայ պահանջը փոխուած էր՝ 10-ի փոխարէն 60 զինուած հայեր էին պահանջում երեք պարագլուխների հետ ի միասին: Պարագլուխները չմերժեցին և այս առաջարկը և նոցա տրուեցաւ: Զիլիամսը միջոց պատանդներ ընտրելու համար:

Բայց չէր անցել և 8 ժամ, երբ գիշերը լոյս շարաթ, յունիսի 8-ին, որոտացին թնդանօթները: Զինասուած թաղերը, ուր պատսպարուել էին հայերը, ումարկոծութեան ենթարկուեցան: Ծածկաց յորձակուած սոսկալի էր, բայց հայերի ընդգրկումութիւն էլ հերոսական էր, Թշնամին արագութեամբ ժողովում էր զիակները, հայերը միայն երկու հօգի կողքորին, նշաւ այնպիսի վայրկեան, երբ թշնամին թնդանօթները փողոցում թողած փախաւ: Հայերը առանց դժուարութեան կարող էին խլել, բայց վախեցան թէ այդ մի թակարդ է, որով կամենում են նոցա հանել իւրեանց տեղերից: Հայերը 12 ժամ գրիմացան ումարկոծութեան, Հիւպատոսներին և միսիօնարներին առաջարկեցին տեղափոխուել միջնաբերդը, որտեղից գուրս էին բերում նոր մեծ թնդանօթներ Այգեւոտանը (թաւ) ումարկոծելու համար: Անգլիական հիւպատոսը աշխատում էր համոզել իւր ընկերակիցներին միջնաբերդը տեղափոխուել ընդհանուր կոտորածից ազատուելու համար:

Այդպէս էլ կլինէր, եթէ Ռուսաց Փօխ—հիւպատոսարանի կառավարիչ պ. Զիլինկարեանը վրձնողարար չհակառակէր դորան, առարկելով թէ նա պարտական է մնալ միայն իւր պետութեան դրօշակի տակ:

Հիւպատոսները և միսիօնարները մնացին իւրեանց տներում և հազարաւոր մարդիկ ապաստան էին որոնում նոցա դրօշակների տակ: Միևնոյն ժամանակ կոխը շարունակվում էր, թնդանօթները անընդհատ որոտում էին:

Ումարկոծութեան հետ սկսուեց հրկիզութիւնը: Հրդեհը և ումարկոծութիւնը շարունակուեցան մինչև երեկոյ, հետո՛հետէ աւելին և աւելի սաստկանալով, Գանի որ հայերը յետ էին քաշուում տարածուող բոցի առջևից, թշնամին տիրում էր նոցա թողած տեղերը: Աերջապէս, համոզուելով որ անպատակ է այլ ևս ընդգրկմանը և տեսնելով որ մի քանի ժամուայ մէջ ամբողջ քաղաքը մոխրակոյտ կդառնայ, հայերը հիւպատոսների միջոցով յայտնում են, որ նոքա պատրաստ են զինթափ լինել և մինչև անգամ հեռանալ քաղաքից, եւ արգարև, նոյն գիշերը (յունիսի 8—9) մօտ 1500 երիտասարդ հայեր, որը զինուած, որը անզէն, գուրս են դալիս Այգեւոտանից իւրեանց երեք պարագլուխների առաջնորդութեամբ և զիմում են գէպի լեռները, ոչ որ չի վստահանում նոցա հալածել, Այգեւոտանի բոլոր ընտանիքները պատսպարուել էին հինգ տեղ՝ Անգլիական, Ռուսաց և Պարսից հիւպատոսարաններում, բողջբական և կաթողիկ միսիօնարների մօտ և նոցա դրացի տներում: որոնց վերայ ծածանուում էին օտար պետութեանց դրօշակները: Իսկ բոլորովին անպաշտպան մնացած քաղաքը (Այգեւոտանը ամենահեռաւոր թաղն է) մատուում էր քրդերի, տաճիկների և բօշանների անցթուլութեանը: Քաղաքը երկու օր շարունակ կողոպտուում էր:

Պիւրակէ (յունիսի 9), Ալիլիամսը և Ռէշնուսը ներկայացնում են իւրեանց պատրաստած աղերսագիրը ի տես Սալիդ—Ադգին փաշայի: Սա չի հաւանում և աղերսագրի խմբագրութիւնը փոխում է: Երկրորդն էլ հաւանութիւն չի գտնում, երրորդը հազիւ թէ գոհացուցիչ է ծանաչուում: Հրաւիրում պատուաւոր հայերը ստորագրում են այդ թուղթը և նա ուղարկում է սուլթանին: Այս աղերսագրի մէջ հայերը շատ գովերոտներ չտալելով Սալիդ—Ադգին փաշայի արժանեաց մասին, խոստովանում են, որ պատսպարութեան պատճառը եկուոր գրգռողներն են եղել, որոնք մի շարք անկարգութիւններ առաջ բերին և որովհետև այդ շարագործները արդէն հեռացել են, ուստի և հայերը խնդրում են վերականգնել կարգն ու խաղաղութիւնը: Այսպիսով կոտորածի յանցանքն ընկաւ հայերի վերայ: Բայց և այնպէս ոչ հայերի այս խոստովանութիւնը, ոչ էլ նոցա աղերսագիրը հետեանք չունեցան՝ սպանութիւնները և աւարատութիւնը չդադարեցան: Միայն Այգեւոտանի մի քանի կնիքոնական փողոյները ազատ մնացին կողոպտուելուց, այս թագի միւս մասը, ուր մօտ 3000 տուն կար, բոլորովին աւերուեցաւ: Այրուեցան աւելի քան 600 երկ և եղբայրների տներ, հայոց—ձորի միւս երեսի վերայ գտնուող Ս. Յակովբայ և Հայկափանի վանքերը դպրոցական և այլ շինութիւններով այրուեցան: Եւրո—կոյս ձորի գեղեցիկ փողոցը ուր գտնուում էր այն տունը, որի մէջ ծնել հայոց Ահէ, Կաթողիկոսը, աւերակների կոյտ է դարձել, ծածկիները իւրեանք զորմանում են կողոպտած գողքի քանակութեան վերայ: Այս ինչ աննորհալալ աղգ են հայերը, ասում են նոքա, զիցել են այսքան հարստութիւն շնորհիւ մեր կառավարութեան և դժգոհ էլ են: Միայն Այգեւոտանի վնասը աւելի քան մի միլիոն տաճիկական ոսկի են հաշուում: չհաշուած այրուած տների գինը:

Այս բոլորը կատարուում էր Այգեւոտանում: քաղաքը փոքր ինչ աւելի էր պաշտպանուած, շնոր-

Տիւ չեղբեղազգի գնդապետ Էմին աղայի ջանքերի յորք Այգեհատում գնդապետ Հալիմ Էֆենդին ամբոխին հրամայում էր ասելով՝ զարկեցէք, կողոպտեցէք, նորա պաշտօնակից Էմին աղան հրամայեց կրակ քանալ ամբոխի գէմ, որ մտադրուում էր յարձակուել բազարի վերայ և իւր ձեռքով մի մարդ սպանեց, Հնորհիւ նորա բազարը և քաղաքի կենդանական մասը միւս մասերից պակաս վնասուեցան, Այստեղ կողոպտուեցան 15 տուն և 150 խանութ, այն էլ գաղանի:

Երեքշաբթի, յունիսի 10-ին, անդուսպ ամբոխը հասնում է արգէն հիւպատոսական թաղերին, Ռուսաց հիւպատոսարանի գիմնացի տունը, մինչև անգամ նորան կից եղածները կողոպտուելուց յետոյ այրուում են, Ցապարների օգնութեամբ փորձում են խուժել հիւպատոսարանին կից տունը, ուր աղատութիւն էին գտել հաղարաւոր մարդիկ Ռուսաց ծածանուող զրօշակի տան, Բարեբաղդարար, յարձակողները յետ են մղուում:

Ձինուած ամբոխը յարձակումն է գործում նաև անգլիական հիւպատոսարանի և միսիօնարների տան վերայ, ուր ծածկուել էին կանայք և երեխայք: Անգլիացւոց հիւպատոսը ծածկելով տաճկական սպայական ֆէսը և հրացանը ուսին բարձրանում է տանիքի վերայ, Զարհուրելի վայրկեան, Աւելի քան 15,000 երեխայոց և կանանց կեանքը մաղից էր կախուած, հիւպատոսի երեսը սարսափ է արտայայտում: Նա լաւ գիտէ տաճկաց կատաղի սարսափելի մոլեռանդութիւնը, Երկու օր առաջ մի ռումբ գիպելով անգլիական զրօշակին, ծակել էր հիւպատոսարանի պատը և ընկել նորա ննջարանը, բայց բարեբաղդարար չէր պայթել, հիւպատոսը հրամայում է իւրեան շրջապատող զինուորներին կրակ քանալ ամբոխի վերայ և այդպիսով ստիպում է նորան յետ մղուել գէպի միւս փողոցը:

Երկուշաբթի (կտորածի 8-դ օրը) լսվում են մայրաքուստի ձայները (հրաւեր հանգստեան), աւարառութիւնը և հրկիզումը դադարում են, հայոց թաղերը շրջապատվում են զինուորներով, Մի քանի օր ապահովութեան վերայ հսկող զինուորները շարունակում են վերջացնել ամբոխի կիսատ թողածը, ըստ երևոյթին կարգը փորելու վերականգնեցաւ բայց հայերը չէին վստահանում նորա չէին և հիւպատոսական տների շրջակայքից դուրս ելնել:

Քաղաքը քարուքանդ անելուց յետոյ իւրեանց տեղերը վերադարձող համիդիէն և բրդերը յարձակվում էին անպաշտպան գիւղերի վերայ:

Մի քանի գիւղերում բոլոր բնակիչներին կոտորել են մինչև վերջին մարդը, Փոքր ի շատե աչքի ընկնող չէնքերը այրուած և քարուքանդ են եղած, որոնց մէջ նաև եկեղեցիները և վանքերը, մինչև անգամ հաշակաւոր Արարազայ վանքը այժմ աւերակների կոյտ է դարձել:

Առաջնորդարանում, հիւպատոսարաններում, միսիօնարների մօտ և այգիների մէջ պատսպարուել են 25,000 հոգի, Աւելացրէք սոցա վերայ 15,000 քաղաքացիներ, որոնք կորցրել են իւրեանց բոլոր կարողութիւնը, և այս բազմութիւնը առանց կերակրի, կիսամերկ ապրում է բացօթեայ սննդով և ինչով որ պատահի՝ խոտով, աւելացուկներով:

Ես ինքս իմ աչքով եմ տեսել, թէ ինչպէս աղեղանները կոպում էին միմեանց հետ չամիչի կրնձեռի համար:

Ժողովուրդը չգիտէ իւր գլխին գալիքը, Գիւղերից մէկը միւսից աւելի զարհուրելի լուրեր են հասնում...

Մ.

ՊԼՇՏՈՆԼԿԱՆՔ.

ԲԱՂՈՒԱՆՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ յանուն Սինոդի Ս. ԼՂմիածնի թ. 914, որով պատուիրի զտոկոսիս 9000 ռուբլեաց, կտակելոց ի ժառանգաց հանդուցեալ Գ. Փրիդոնեան, ամ ըստ ամէ յանձնել վարչութեան ձեմարանի:

— Ծանուն Սինոդի Ս. ԼՂմիածնի թ. 926 որով պատուիրի կարգադրել զի Ժուին երկուրդ քահանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ծուխուոյ յանձնեցի նորընծայ Տ. Երեմեայ քահանայի Ապրիլեան:

— Ծանուն Մարդասիրական ընկերութեան Բազուայ, թ. 927, որով պատուիրի ըզտոկոսիս 30,000 ռուբլեաց, կտակելոց ի ժառանգաց հանդուցեալ Թումայեանի և 10,000 ռուբլեաց Ադամեանի, առաքել ամ ըստ ամէ վարչութեան ձեմարանի:

— Ծանուն վարչութեան ձեմարանի թ. 934, որով պատուիրի ստանալ ի Սինոդէն զտոկոսիս կտակեալ գումարին Փրիդոնեան և մատակարարել զայնս Մուշեղ սարկաւազի, որ ունի երթալ ի Ռուսաստան առ ի յուսանիլ զիրաւարանական գիտելիս և մանաւանդ զեկեղեցական իրաւագիտութիւնն: Եւս ստանալ ի Մարդասիրական ընկերութենէ Բազուայ զտոկոսիս գումարաց Թումայեան և Ադամեան և մատակարարել վարդապետացն Տ. Եղնիկի և Ծուսկան, որք ուսանելոց են զաստուածաբանական գիտելիս և Տ. Կոմիտասի, որ ուսանի զեկեղեցական երաժշտութիւն: Ընդ նրմին և պարտիք դնին ի վերայ վարչութեան հետեւիլ ընթացից ուսման չորեցունց և հրահանգել զնոսա:

— Ծանուն Դեր. Առաջն. Տփղեաց Տ. Դեորդայ Արքեպիսկոպոսի թ. 959, որով ազատ կացուցանի Տ. Մեսրոպը քահանայն Մեղիան ի պաշտօնէ թեմական տեսութեան եկեղ.— Տխ. զպրոցաց հայոց վիճալին Տփղեաց ի 1 սեպտեմբերի տարւոյս:

— Ծանուն Տ. Վրթանէս քահանայի Տ.